կռվեց ու հայհոյեց նրանց՝ ասելով միթե անօրենությամբ ուրացնելը օրենք է:

Հարկապետը հրամայեց դուրս անել նրան: Գնաց իր խանութը, ամեն օր տեսնում էր, որ մանուկը լալիս է և գտնվում էր տրտմության մեջ: Ապա վարպետը իր աշակերտին ասում է՝ որդյակ իմ Բաղդասար, ահա դու հայտնի ես, դրա համար չես կարող այստեղ քրիստոնյա մնալ, վեր կաց գնա քո ծնողների մոտ, այնտեղ ինչպես կամենում ես, այնպես մնա: Նրան փող տվեց ու հանձնեց կարավանապետին:

Եկավ ծնողների մոտ լալով պատմեց: Ծնողները ասացին՝ որդյակ, ահա բոլորը իմացան քո մասին, իսկ դու չես կարող ծածուկ պաշտել քո հավատը, գնա դու հայոց երկիրը՝ Սուրբ Էջմիածին և բոլոր վանքերը, այնտեղ համարձակ պահիր հավատդ: Այստեղ մնալով գուցե քեզ նեղեն: Իսկ երանելի մանուկ Բաղդասարը որպես բարի հող ընդունեց ուրախության սերմը և հազարավոր պտուղ տվեց: Ծնողների օրհնությունը և ինչ-որ պաշար ճանապարհի պետքերի համար առնելով ուղղություն վերցրեց գնալու դեպի Արարատ: Ելավ լալով ու խնդությամբ գնաց հասավ Սուրբ Էջմիածին և բոլոր վանքերը շրջագայեց, ինչպես Վահան Գողթնացին[173], ապա Զաքարիա անունով մի վարդապետ գտավ և աշակերտեց նրան՝ Սաղմոսը սովորեց անգիր: Երբ վարդապետը մեռավ, նա գնաց Երևան քաղաքը և պատահեց մի քրիստոնյայի, որ իր արհեստակիցն էր, այնտեղ միամիտ ապրում էր: Իսկ չար սատանան մի մահմեդականի վեր կացրեց նրա դեմ: Նա եկավ երանելու մոտ և ասաց՝ ես թոխաթցի եմ, քո ծնողները շատ աղաչեցին ինձ՝ ասելով, թե Աստծու սիրուն, երբ գնաս Երևան, որոնիր մեր տղային, ուր էլ լինի, գտիր քեզ հետ բեր: Ես շրջեցի բոլոր վանքերը, ահա այստեղ գտա քեզ, եկ որ գնանք:

Իսկ միամիտ պատանի Բաղդասարը նրա նենգությունը չհասկացավ, նաև ծնողների սերը հիշեց, ուստի պատրաստվեց գնալ: Մահմեդականն ասաց, թե դու դրամ ունես փոխարինաբար տուր ինձ, որ իմ մաքսը տամ, գնանք Կարին, այնտեղ մետաքսը կվաճառեմ և քո փողը կտամ: Անմեղ մանուկը հանեց միամտությամբ տվեց, ինչ որ ուներ: Եվ ելավ կարավանի հետ գնացին հասան Կարին: Բաղդասարը տեսավ մի մահմեդական, որ իր հոր մոտիկ դրկիցն էր և իրեն արհեստակից, միմյանց տեսնելով չափազանց ուրախացան: Մահմեդականն ասաց՝ ես կամենում եմ գալ Երևան քո ծնողների խնդրանքով, և քանի որ այստեղ ես եկել, միասին կգործենք և միասին կգնանք: Միմյանց հետ սիրով իրենց արհեստն էին բանեցնում:

Իսկ այն անիծյալ մահմեդականը, որ խաբելով նրան հանեց բերեց Կարին, երբ տեսավ, թե մնաց այստեղ և չի կամենում իր հետ գնալ, չարացավ: Առած դրամի համար վարանում էր, թե ինչպես ուրանա: Մի օր, երբ իմացավ, որ նրա ընկերը գնացել է գյուղ իրենց համար անհրաժեշտ բաներ բերելու, գնաց փաշայի մոտ և մատնեց երանելի մանուկ Բաղդասարին: Ասաց՝ մի մահմեդականի որդի թոխաթցի գնացել է Երևան հայություն անելու: Առա բերի մինչև այստեղ, այստեղ էլ է հայություն անում: Փաշան նրա հետ երկու զորականներ դրեց և ասաց՝ գնացեք, բերեք նրան: Իսկ այն անիծյալը առաջ ընկավ, զորականները հետևից, երբ մոտեցան այն տեղին, որտեղ մանուկն էր, այն պիղծը հեռու կանգնեց, մատով ցույց տվեց կրպակը և ասաց՝ այն է նրա բնակությունը, քանզի այդ անիծվածը վախենում էր նրա ընկերոջից:

Զորականները տեսնելով նրան՝ հարցնում են՝ դո՞ւ ես թոխաթեցի Բաղդասարը: Պատանին պատասխանում է՝ այո՛, ես եմ: Զորականները ասում են, վեր կաց, որովհետև փաշան քեզ պահանջում է: Իսկ պարկեշտ մանուկը իմացավ, որ այդ պիղծը իր դրամի համար մատնեց իրեն: Ելավ խանութից, բանալին տվեց մյուս խանութպանին և ասաց՝ երբ իմ ընկերը գա, բանալին կտաք նրան: Իսկ ինքը ուրախությամբ գնաց զորականների հետ: Մտավ փաշայի մոտ և ողջունեց: Փաշան ասաց՝ դու մեր երկրում մահմեդական ես եղել, գնացել ես Պարսկաստան, դարձել ես քրիստոնյա: Արդ՝ դարձյալ դարձիր դեպի մահմեդականությունը, ես քեզ կնշանակեմ զորագլուխ:

Մանուկն ասում է՝ ես քրիստոնյաների ծնունդ եմ, սնվել եմ քրիստոնեական հավատով, մահմեդականությունը բոլորովին չգիտեմ: Փաշան ասում է՝ այդ ինչ ասում ես, սուտ ես ասում, որևէ մեկին հույս ու ապավեն մի՛ համարի, այլ եկ մեր ճշմարիտ հավատին: Իսկ եթե չգաս, չարաչար կերպով կմեռնես: Բաղդասարն ասում է՝